ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

«20» հունիսի 2017թ.-ին կնքված **N «ՎՁՄՁՔ-ԳՀԱՇՁԲ-17/1»** ծածկագրով Ջերմուկի համայնքի բարեկարգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին:

ք. Ջերմուկ «12» հուլիսի 2017թ.

Ջերմուկի համայնքապետարանն, ի դեմս համայնքի ղեկավար Վարդան Հովհաննիսյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Երևաննախագիծ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Սիրեկան Օհանյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և «20» հունիսի 2017թ.-ին կնքված **N «ՎՁՄՁՔ-ԳՀԱՇՁԲ-17/1»** ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ 7.4 կետով, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին :

1. Համաձայնագրի առարկան

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 56 կետի 2-րդ ենթակետով՝ Կողմերը որոշեցին

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 56 կետի 2-րդ ենթակետը ՝ Պայմանագրի 4.1 կետում նշված 39600000 (երեսունինը միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ բառերը փոխարինել 42600000 (քառասուներկու միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամով:

Ի լրացում՝ 20.06.2017 № ՎՁՄՁՔ-ԳՀԱՇՁԲ-17/1 պայմանագրին կից «Ջերմուկ համայնքի կարիքների համար «Ջերմուկ համայնքի բարեկարգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման», տեխնիկական բնութագրի, լրացուցիչ մշակել հետևյալ օբյեկտների նախագծա-նախահաշվային փաստաթղթերը.

1.1 Հաշվի առնելով՝ Մյասնիկյան փողոցի վերջնամասից, նախկին Ջերմուկ հյուրանոցից դեպի ջրվեժ ճեմուղու բարեկարգման և Դելֆինի լճի հարակից տարածքի բարեկարգում՝ ամֆիթատրոնի նախատեսումով օբյեկտների նախագծանախահաշվային լրացուցիչ աշխատանքների կատարման անհրաժեշտությունը նախագծային աշխատանքների ավարտման ժամկետը երկարացնել:

1.2 Լրացուցիչ մշակել հետևյալ օբյեկտների նախագծա-նախահաշվային փաստաթղթերը,

. Ջերմուկի համայնքի աջափնյա թաղամասի «քաղաքային զբոսայգու», «ըմպելասրահից դեպի <<քարայծ>> ճեմուղու», «Մյասնիկյան փողոցի վերջնամասից՝ նախկին «Ջերմուկ» հյուրանոցից, սկիզբ առնող մինչև ջրվեժ ձգվող ճեմուղու» լուսատուները նախատեսել մեր կողմից առաջարկվող տեխնիկական բնութագրին և արժեքին համապատասխան:

. Ջերմուկ համայնքի ձախափնյա թաղամասում հ.հ. 5 և 6 շենքերի հարակից տարածքում նախատեսել քաղաքային տնտեսության սպասարկման կայան:

. Ջերմուկ համայնքի աջափնյա թաղամասում Մ. Գորկու անվան № 1 հիմնական դպրոցի հարակից տարածքում նախագծել «թենիս»-ի կորտ:

1.3 Պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պայմանագրի կատարման վերջնաժամկետ սահմանել մինչև 2017թ. օգոստոսի 3-ը:

2.1. «20» հունիսի 2017թ.-ին կնքված **N «ՎՁՄՋԲ-ԳՀԱՇՁԲ-17/1»** ծածկագրով Ջերմուկի համայնքի բարեկարգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագիրը և հավելվածները կազմված են հայերեն լեզվով, երկու /2/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և տրվում են Կողմերին:

2.3 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Ջերմուկի համայնքապետարան	«Երևաննախագիծ» ՓԲԸ
ք. Ջերմուկ Մյասնիկյան 8	ք. Երևան, Բուզանդի 1/3
Կենտրոնական գանձապետարան	«Պրոմեթեյ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900362040314	Հ/Հ 1660000215670100
ՀՎՀՀ 08913735	ՀՎՀՀ 02500241
համայնքի ղեկավար՝ Վ. Հովհաննիսյան	տնօրեն՝ Ս. Օհանյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 2
«12» հուլիսի 2017թ. կնքված
«ՎՁՄՋԲ-ԳՀԱՇՁԲ-17/1» *ծածկագրով պայմանագրին կից*
N°1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի					
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**		
			օգոստոս	սեպտեմբեր	Ընդամենը
1	71241200	Ջերմուկի համայնքի բարեկարգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ	42600000	42600000	42600000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջերմուկի համայնքապետարան
ք. Ջերմուկ Մյասնիկյան 8
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900362040314
ՀՎՀՀ 08913735
համայնքի ղեկավար՝ Վ. Հովհաննիսյան

(ստորագրությունը)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Երևաննախագիծ» ՓԲԸ
ք. Երևան, Բուզանդի 1/3
«Պրոմեթեյ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1660000215670100
ՀՎՀՀ 02500241
տնօրեն՝ Ս. Օհանյան

(ստորագրությունը)
Կ.Տ.